

Թ Մարտ 1991

Ազնուաֆայլ**Sf. Թերկորուիի Սվաճեան****Պրուլին, Ն. Ե.****Սիրելի Տիկին Սվաճեան,**

Այս նամակին բուականը ցոյց կու տայ որ, թէ իսկ ուշացումով ստացուած, մեր նամակը բաւական պիտի սպասէր իր պատշաճ պատասխանը արձանագրելու համար: Այստեղ, կազմակերպուած աշխատանք կատարելու կարելիութիւնները նախնական են թէ՝ գրասենեկային կարգաւորման, եւ թէ սենեակներու անրաւարառութեան եւ սահմանափակ թիւով անձերու ներկայութեան պատճառու:

Ժառանգաւորաց վարժարանի կացութեան մասին Պր. Մանուկեանին մահրամասն տեղեկութիւն դրկած են: Բայց ատիկա աւելի փիզիական կառոյցին տակաւին անաւարտութեան եւ բայցայուածքին պատկերը կու տար: Կրրական բաժինը ուրիշ աւերած մըն է: Աշակերտները գրերէ ամէնքն ալ Լիրանանէն են: Տասնըշորս տարեկան տղան արդէն չորս-ենց տարի գարողի երես հաջու տեսած, հայերէն կարդայու համար կը կմկմայ: Ուրիշ լեզուներ սորվիլը բեռ կը նկատէ: Լաւ ուսուցիչները (քիւով ժիշլ իրենց յուսախարութեան հակառակ, կը շարունակն իրենց կոչումին հաւատարիմ մնալ, երբեմն մինչեւ իսկ նիւթականի կարիքէն մղուած: Եւ տակաւին ուրիշներ (հոգեւորական եւ աշխարհական) որոնք շատոնց պէտ էր գաղրեցուին ուսուցանիէ, պաշտօնեայ են, որովհետեւ դասարան գտնուին կամ ոչ, իրենց ամսականը կը բանի: Եւ այս է իրենց մղիչ ուժը:

Թառաշիկայ տարեցանի համար, նիւ Եօրէն մեզի դրկուած թիւադրութիւնները Ըկատի առնելով, եւ մեր ժամանակացոյցին յարմարցնելով դասացուցակ եւ դասընթացք մը կազմած ենք, որուն մանրամասնութեանց վրայ կ'աշխատին մի ժամի դաստիարակներ: Հիմնական երկու հարցեր պիտի ըլլան՝ աշակերտներ ունենալ տարրեր տարիին եւ ուսումնական մակարդակով, որպէս զի բառ այնմ ուսուցիչներ եւ մասնագէտ դաստիարակներ կարողանանի հրաւիրել:

Այս դաստիարակներուն նիւթական հասուցումը տագնապ ստեղծող հարց մը կրնայ դառնայ: Այստեղի չափանիշով դժուար թէ կարելի ըլլայ զանոնք գոհացնել: Նոյնպիսի շարժառիթներ են որ մեր եկեղեցականներուն վարանի կու տան նրուսաղէմ գալ եւ ծառայել: Եւ հետեւարար միշտ պիտի տագնապինք: Մինչեւ որ տունը կարգի մտնէ:

Շնորհակալութիւն մեր դրկած նուէրին համար: Մեր նպատակներէն մէկն է ժաշակերել մեր շրջանաւարտները կամ եկեղեցականները որոշ նիւթերու մէջ մասնագիտանալու: Ձեր ամուսինի յիշատակին մեր կարգադրութիւնը օգտակար եւ իմաստայից կը դառնայ:

Ուրախ եղանք իմանալով որ Սիրկան տաճախիկին հայունի մը դարձած է - «անհաւատալի, բայց իրաւ:» Նորանոր յաջողութիւններ նաև թակորին: Գիտենք թէ անոնց Հայ Տուն կազմելը մեր մեծագոյն ուրախութիւնն ու միխրաբութիւնն է:

Սիրալիր ողջոյններ մեր ընտանիքի անմիջական անդամներուն եւ բարեկամներուն:

**Սիրոյ Ռողաւնիւ
Թորգոմ Արք. Մանուկեան
Պատրիարք**